ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՆԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Ներման ինստիտուտն իրենից ներկայացնում է հանցագործություն կատարած անձի նկատմամբ՝ մարդու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության, արդարության սահմանադրական սկզբունքների անմիջական գործողության դրսևորում[1]: Թերևս այս հանգամանքով է պայմանավորված բազմաթիվ երկրների օրենսդրությամբ դատապարտյալներին ներում շնորհելու իրավական հնարավորության ընձեռումը:

Ներման իրավունքի վերաբերյալ կարգավորումներ են պարունակում նաև մի շարք միջազգային իրավական ակտեր՝ մասնավորապես՝ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը (հոդված 6)[2], «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան (փոփոխված 11-րդ արձանագրությամբ, հոդված 40[3]), «Քրեական

---

[1] Տես ՀՀ Սահմանադրական դատարանի 05.02.2008 թվականի ՍԴՈ-733 որոշումը:

[2] Ամեն ոք, ով մահապատժի է դատապարտված, իրավունք ունի խնդրելու ներման մասին կամ դատավճիռը մեղմացնելու մասին: Ամնիստիան, ներումը կամ մահապատժի փոխարինումը կարող են շնորհվել բոլոր դեպքերում:

[3] Եթե որևէ անձ վերջնական դատավճռով մեղավոր է ճանաչվել քրեական հանցագործություն կատարելու մեջ, և եթե հետագայում նրա նկատմամբ կայացված դատավճիռը չեղյալ է հայտարարվել, կամ նա ներման է ենթարկվել այն հիմքով, որ նոր կամ նոր բացահայտված որևէ փաստ համոզիչ կերպով ապացուցում է դատական սխալի առկայությունը, ապա նման դատապարտման հետևանքով պատիժ կրած անձը փոխհատուցում է ստանում տվյալ պետության օրենքին կամ պրակտիկային համապատասխան, եթե չի ապացուցվում, որ

գործերով վարույթների փոխանցման մասին» եվրոպական կոնվենցիան (հոդված 35[4]) և այլն:

Ներման իրավունքին անդրադարձել է նաև Վենետիկի Հանձնաժողովը՝ նշելով, որ Եվրոպայի խորհրդի անդամ երկրներում առկա են գթասրտության դրսևորման երկու հիմնական միջոցներ՝ համաներումը և ներումը: Համաներումը անհատական բնույթ չի կրում և վերաբերելի է բոլոր մարդկանց, իսկ ներումը՝ կոնկրետ անհատի կամ անհատների խմբին: Եթե ներումն, որպես կանոն, ուղղված է արդեն իսկ նշանակված պատժի ներմանը, ապա համաներումը կարող է կիրառվել մինչ քրեական գործի սկիզբը կամ դրանից հետո ցանկացած փուլում: Եթե համաներումը, որպես կանոն օրենսդիր մարմնի իրավասության տիրույթում է, ապա ներման շնորհումը պետության ղեկավարի բացառիկ իրավասությունն է: Ներման շնորհումը ենթադրում է հայեցողական ակտ, որի բնույթից բխում է, որ այդպիսի ակտերը վերացման ենթակա չեն[5]:

Հարկ է նշել, որ մինչև 2015 թվականի սահմանադրաիրավական բարեփոխումները ներման խնդրանքի իրավունքը իր ամրագրումն էր ստացել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) (2005 թվականի խմբագրությամբ) 20-րդ հոդվածում, որի համաձայն՝ յուրաքանչյուր դատապարտյալ ունի ներման կամ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունք, իսկ Սահմանադրության 55-րդ հոդվածի 17-րդ կետով սահմանվում էր ՀՀ Նախագահի՝ դատապարտյալներին ներում շնորհելու իրավասությունը:

Հատկանշական է, որ ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 20-րդ հոդվածը չէր պարունակում ներման իրավունքի իրացման մանրամասների օրենսդրական կարգավորման պահանջ: Խնդրո առարկա իրավունքի հետ կապված հարաբերությունների կանոնակարգման համար իրավական հիմք է ծառայել Հայաստանի Հանրապետության Նախագահի 2003 թվականի նոյեմբերի 19-ի «Դատապարտյալների ներման խնդրագրերը քննարկելու

ժամանակին այդ փաստը չբացահայտելը լիովին կամ մասամբ կախված չի եղել տվյալ անձից:

[4] Անձը, որի նկատմամբ կայացվել է վերջնական և կատարման ենթակա դատավճիռ, չի կարող նույն արարքի համար հետապնդվել, դատապարտվել կամ ենթարկվել պատժի մեկ այլ Պայմանավորվող պետությունում եթե նշանակված պատիժը համաներման կամ ներման պատճառով մասամբ կամ ամբողջությամբ ի կատար չի ածվել

[5] Տես http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2013)009-e

կարգը հաստատելու մասին» թիվ ՆՀ-183-Ն հրամանագիրը (այսուհետ՝ Հրամանագիր):

2015 թվականի սահմանադրաիրավական բարեփոխումների արդյունքում ներման խնդրանքի իրավունքը, որպես հիմնական իրավունք, իր ամրագրումը ստացավ Սահմանադրության 70-րդ հոդվածում, որն ամրագրում է. «Յուրաքանչյուր դատապարտյալ ունի ներման, ներառյալ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով:»

Միաժամանակ, Սահմանադրության 135-րդ հոդվածով սահմանվեց, որ Հանրապետության նախագահն օրենքով սահմանված դեպքերում և կարգով լուծում է դատապարտյալներին ներում շնորհելու հարցը: Ընդ որում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 76-րդ հոդվածի համատեքստում ներման իրավունքը չի դիտարկվում որպես արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցման կամ լրացուցիչ սահմանափակումների ենթակա իրավունք:

Սահմանադրության վերը նշված հոդվածների համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ սահմանադրական բարեփոխումների համատեքստում ներման խնդրանքի իրավունքի իրացման բոլոր մանրամասները և ՀՀ Նախագահի կողմից ներում շնորհելու հարցի լուծման հետ կապված հարաբերությունները պետք է հստակ կարգավորվեն օրենքով, ինչը առաջին հերթին ուղղված է իրավական որոշակիության սկզբունքի հետևողական կենսագործմանը:

Բացի այդ, ներման իրավունքի հետ կապված հարցերի օրենսդրական հստակ կարգավորման նախատեսումը նաև Սահմանադրության մեկ այլ կարևոր պահանջի՝ հիմնական իրավունքների վերաբերյալ սահմանադրորեն ամրագրված դրույթների էության անխախտելիության պահպանման լրացուցիչ երաշխիք է (հոդված 80):

Հարկ է նշել, որ ներման ինստիտուտի էությանը անդրադարձ է կատարել նաև ՀՀ Սահմանադրական դատարանը:

Մասնավորապես, ՀՀ Սահմանադրական դատարանը 05.02.2008 թվականի ՍԴՈ-733 որոշմամբ ներման ինստիտուտի կիրառման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման ուսումնասիրության հիման վրա արձանագրել է, որ ներում հայցելու իրավունքի իրացման համար որևէ

նախապայման սահմանված չէ, ներում կարող է հայցել յուրաքանչյուր դատապարտյալ, ներումը կարող է շնորհվել յուրաքանչյուր դատապարտյալի՝ անկախ կատարված հանցագործության բնույթից, ծանրությունից ու այլ հանգամանքներից, մասնավորապես՝ պատժաչափից, պատժի կրած մասից:

Ներում շնորհելու համար որևէ պարտադիր չափանիշ նախատեսված չէ, այն ամբողջությամբ թողնված է ՀՀ Նախագահի հայեցողությանը: Նախագահի՝ ներում շնորհելու իրավունքը սահմանափակված չէ ո՛չ դատապարտյալների շրջանակով, ո՛չ հանցագործությունների բնույթով, ո՛չ պատժատեսակներով ու պատժաչափերով: Ներում հայցելու իրավունքի իրացումը որևէ նախապայմանով պայմանավորված չէ, ինչի արդյունքում որևէ կերպ չի սահմանափակվում ներում հայցելու իրավունք ունեցող դատապարտյալների շրջանակը՝ անկախ պատիժը կրելու ժամկետից, և, հետևաբար, այդ իրավունքից կարող է օգտվել յուրաքանչյուր դատապարտյալ:

Մեկ այլ, 13.09.2004 թվականի ՍԴՈ-502 որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ. «Միջազգային քրեական դատարանի կանոնադրության 105 հոդվածի դրույթներով ստանձնած պարտավորությունները, որոնցով բացառվում է դատապարտված անձանց ներպետական ընթացակարգով ներման իրավունքի և համաներման հնարավորության իրացումը, չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը»:

Ներման դրսևորումների մասով ՀՀ Սահմանադրական դատարանը արձանագրել է, որ ՀՀ քրեական օրենսգիրքը[6] տարբերակում է ներման երկու տարատեսակ՝ լրիվ ներում (պատժից լրիվ ազատում, ներառյալ՝ հետևանքները) և մասնակի ներում (պատժից մասնակի ազատում կամ պատժի չկրած մասի փոխարինում ավելի մեղմ պատժով)[7]:

Հաշվի առնելով սահմանադրական բարեփոխումների արդյունքում ՀՀ Սահմանադրության 70-րդ, 135-րդ հոդվածներով առաջադրվող ներման իրավունքի իրացման և ներում շնորհելու գործընթացների օրենսդրական հստակ կարգավորման պահանջը, անհրաժեշտ է մշակել «Ներման մասին» ՀՀ օրենքի նախագիծ՝

---

[6] Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 83-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության համար դատապարտված անձը ներման ակտով կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը:

[7] Տես ՀՀ Սահմանադրական դատարանը 2008 թվականի ՍԴՈ-733 որոշումը:

որդեգրելով այնպիսի մոտեցում, որն առավելագույնս կապահովվի ներման հիմնարար իրավունքի երաշխավորվածությունը:

Այս առումով պետք է առանձնացնել այն հիմնական խնդիրները, որոնք իրենց կարգավորումը պետք է ստանալ «Ներման մասին» ՀՀ օրենքի նախագծով:

Անհրաժեշտ է հստակ կանոնակարգել ներման դրսևորման խնդիրը, քանի որ ի տարբերություն ՀՀ քրեական օրենսգրքի 83-րդ հոդվածի՝ Հրամանագիրը ընդլայնել է ներման դրսևորումների ցանկը: Մասնավորապես՝ Հրամանագրի համաձայն՝ Հանրապետության նախագահը ներում շնորհելով կարող է պատիժը կրած անձանց լրիվ կամ մասնակիորեն ազատել պետության օգտին դատավճիռներով գանձվող նյութական վնասի հետագա հատուցումից, ինչը խնդրահարույց է ՀՀ քրեական օրենսգրքի հետ համապատասխանության տեսանկյունից: Բացի այդ միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս վկայում է, որ նյութական վնասի հետագա հատուցումից անձը ներման դեպքում չի ազատում:

Ներման դրսևորումների մեջ անհրաժեշտ է ներառել նաև պատժի չկրած մասի՝ ավելի մեղմ պատժաչափով փոխարինման հնարավորությունը:

Եթե պետության գլխի լիազորությունների մեջ ընդգրկված է պատժից ընդհանրապես ազատելու իրավունքը, ապա ակնհայտ է, որ նա լիազորված է այդ իրավունքն իրականացնել նաև մասամբ, իսկ պատժի մեջ է մտնում պատժի ինչպես չափը, այնպես էլ տեսակը[8]:

Բացի այդ, ներման ինստիտուտի ներկայիս իրավակարգավորումների ուսումնասիրությունը վկայում է, որ կանոնակարգված չեն ներման խնդրագիր ներկայացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, ներման խնդրագրին ներկայացվող պահանջները, հստակեցման և վերանայման կարիք ունեն ներման խնդրագրի քննարկման ժամանակ ՀՀ նախագահի կողմից հաշվի առնվող հանգամանքների շրջանակը, ներման խնդրագրերի քննարկման փուլում առաջարկություններ ներկայացնող մարմինների շրջանակը, առկա է նաև ներում շնորհելու ինստիտուտի՝ առավել թափանցիկ և հաշվետու դարձնելու անհրաժեշտությունը և այնպիսի իրավակարգավորումների նախատեսման անհրաժեշտություն, որոնք առավելագույն կապահովեն նաև հանցագործության հետևանքով տուժած անձանց շահերի պաշտպանությունը:

---

[8] Տես ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի խմբագրությամբ, Եր.: Իրավունք, 2010, էջ 650

Այժմ անդրադառնանք ներման իրավունքի իրացման կառուցակարգերի վերաբերյալ միջազգային փորձին:

Այսպես, **Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում** ներում շնորհելու իրավական հիմքը սահմանվում է սահմանադրությամբ: Դաշնությունում անհատին ներում շնորհելը կարող է իրականացվել երկու տարբեր մակարդակներով, որի պատճառ է հանդիսանում Գերմանիայի դաշնային պետություն լինելը: Մասնավորապես՝

1) Գերմանիայի նախագահն իրավունք ունի ներում շնորհելու անհատին.

2) Դաշնային յուրաքանչյուր կառավարությունն իրավունք ունի ներում շնորհելու անհատին:

Գերմանիայում ցանկացած անձ, ով դաշնային դատարանի կողմից մեղավոր է ճանաչվել, կարող է ներում շնորհելու մասին դիմում ներկայացնել: Դիմումը փաստաբանի միջոցով ներկայացնելու պահանջ առկա չէ, իսկ դիմումում պետք է ներկայացվեն այն հիմքերը, որոնց պատճառով պատժի հետագա կրումը կհանգեցնի պատժի նպատակներից շեղման: Ներում շնորհելու մասին որոշում կայացնելու դեպքում համապատասխան մարմինը իրավունք ունի ամբողջապես կամ մասնակի կերպով ազատել անձին պատժի կրումից, հետաձգել պատժի կրումը:

Իսպանիայի Թագավորությունում ցանկացած դատապարտյալ իրավունք ունի դիմել ներում ստանալու համար: Թագավորը չի կարող ներում շնորհել վարչապետին կամ կառավարության այլ անդամներին: Գործընթացի թափանցիկության ապահովելու համար ներման ակտերը հրապարակվում են պաշտոնական տեղեկագրում: Ներում շնորհելու վերաբերյալ դիմումը կարող է ներկայացվել դատապարտյալի, ցանկացած անձի, դատարանի, դատախազի և կառավարության կողմից: Դիմում ներկայացնողը պետք է դիմումի մեջ ներառի դատապարտյալի և գործի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն: Դիմումը պետք է ներկայացվի արդարադատության նախարարություն: Արդարադատության նախարարությունը դիմումին առնչվող բոլոր փաստաթղթերը հավաքում և ներկայացնում է կառավարությանը: Եթե կառավարությունը հավանություն է տալիս դիմումով ներկայացված առաջարկին, ապա արդարադատության նախարարությունը դիմումը ներկայացնում է թագավորին՝ առաջարկելով ներում շնորհել դատապարտյալին:

Հատկանշական է, որ ներման կիրառման ընդհանուր կանոնների մասին օրենքը սահմանում է երկու պայման, որոնց առկայության դեպքում անձը կարող է ներում ստանալ՝

1) ներման շնորհումը չպետք է որևէ ձևով ոտնահարի երրորդ անձանց իրավունքները.

2) ներման գործընթացում պետք է իրավունք տրվի տուժող կողմին արտահայտելու իր բողոքները ներում շնորհելու վերաբերյալ:

Նշվածից հետևում է, որ Իսպանիայի Թագավորությունում ներման իրավունքի իրացման առումով առկա են հետևյալ առանձնահատկությունները.

- *ներման խնդրագրեր ներկայացնող անձանց շրջանակը լայն է.*
- *գործընթացում ներգրավված են Արդարադատության նախարարությունը, կառավարությունը և թագավորը.*
- *նախատեսված են որոշակի պայմաններ, որոնց առկայության դեպքում ներում չի շնորհվում.*
- *ներման վերաբերյալ ակտերը ենթակա են հրապարակման:*

Ֆրանսիայի Հանրապետության Սահմանադրության 17-րդ հոդվածը սահմանում է, որ նախագահը ունի անհատական ներում շնորհելու իրավունք: Այն անձինք, ովքեր հանցագործություն են կատարել կարող են նախագահին ներում շնորհելու դիմում ներկայացնել: Միակ պայմանը այն է, որ պատիժը լինի վերջնական և կատարման ենթակա: Այսինքն՝ դատավճռի բողոքարկման բոլոր հնարավորությունները պետք է սպառված լինեն:

Ներում շնորհելու մասին դիմումը ներկայացվում է Ֆրանսիայի Հանրապետության նախագահին: Դիմումը կարող է ներկայացվել դատապարտյալի, փաստաբանի կամ դատախազի կողմից: Բացի այդ, դիմումը կարող է ներկայացվել իրավաբանական անձի կամ երրորդ անձանց կողմից:

Դիմումն ուսումնասիրելուց հետո դատախազը (այն դատախազը, ով տվյալ գործով մեղադրանքի կողմն է հանդիսանում) այն փոխանցում է արդարադատության նախարարության քրեական գործերի և ներման վարչություն: Վերջինս պետք է կարծիք հայտնի դիմումի վերաբերյալ: Եթե կարծիքը դրական է, ապա արդարադատության նախարարությունը ներման հրամանագրի նախագիծը ուղարկում է նախագահին: Համաձայնության դեպքում նախագահը ստորագրում է

հրամանագիրը: Քրեական օրենսգրքին համապատասխան՝ հրամանագիրը պետք է ստորագրվի նաև վարչապետի և արդարադատության նախարարի կողմից: Ներման հրամանագիրը պաշտոնական տեղեկագրում չի հրապարակվում, սակայն դատապարտյալը, ում վերաբերյալ ներման հրամանագիր է հրապարակվել, տեղեկացվում է վերջինիս մասին:

Վերոգրյալը թույլ է տալիս առանձնացնել Ֆրանսիայի Հանրապետությունում ներման իրավունքի իրացման գործընթացի հետևյալ առանձնահատկությունները.

- *ներման խնդրագրեր ներկայացնող անձանց շրջանակը լայն է.*
- *գործընթացում ներգրավված են Դատախազությունը, Արդարադատության նախարարությունը և նախագահը.*
- *ներման իրավունքի իրացումը որևէ պայմանով սահմանափակված չէ.*
- *ներման վերաբերյալ ակտերը ենթակա չեն հրապարակման:*

Բելգիայի Թագավորության Սահմանադրության համաձայն Բելգիայի թագավորը իրավունք ունի ներում շնորհել (պատիժը կրճատելու կամ պատժից ազատելու) դատարանի կողմից կիրառված պատժի դեպքում:

Բելգիայի Թագավորությունում առկա են ներում շնորհելու սահմանափակումներ: Մասնավորապես՝ եթե Բելգիայի գերագույն դատարանը մեղավոր է ճանաչել նախարարին կամ կառավարության աշխատակցին կամ ցանկացած պետական պաշտոնյայի, ապա թագավորը կարող է ներում շնորհել միայն այն դեպքում, երբ ներկայացուցիչների պալատը կամ Պառլամենտը ներկայացրել է ներում շնորհելու դիմում: Բացի այդ, Բելգիայում գործում են վարչական մեխանիզմներ, որոնց միջոցով ներում շնորհելու ընթացակարգը վերահսկվում է:

Բելգիայում ներում շնորհելու ընթացակարգը հետևյալն է.

1) Ներում շնորհելու ընթացակարգի նախաձեռնողի դերում կարող են հանդես գալ դատապարտյալը կամ ցանկացած շահագրգռված անձ: Ներում շնորհելու համար դիմումը կարող է ուղարկվել թագավորին, արդարադատության նախարարին կամ ուղղակիորեն արդարադատության ներման վարչություն.

2) դիմումը ներկայացնելուց հետո Արդարադատության նախարարության աշխատակիցը ուսումնասիրում է դիմումը, վերլուծում և կարծիք է հայտնում ներում շնորհելու վերաբերյալ: Այնուհետև՝ կարծիքը ուղարկվում է Ներման վարչության

ղեկավարին և Օրենսդրական, հիմնարար իրավունքների և ազատությունների վարչության ղեկավարին.

3) երկու վարչությունների ղեկավարները իրենց կարծիքն են ամփոփում և ներկայացնում գլխավոր դատախազին.

4) վերջինս դիմումի վերաբերյալ իր կարծիքը ուղարկում է արդարադատության նախարարին՝ նախկինում ներկայացված կարծիքների, դատավճռի, դատապարտյալի դատվածության և նրա վարքագծի վերաբերյալ հաշվետվության հետ միասին.

5) Արդարադատության նախարարը իր եզրակացությունն է ներկայացնում թագավորին.

6) վերջնական որոշումը կայացնում է թագավորը:

Թագավորը անհատական գործի փաստերի հիման վրա կայացնում է վերջնական որոշում: Թագավորի որոշումը պարունակվում է թագավորական հրամանագրի մեջ, որը ստորագրվում է նաև արդարադատության նախարարի կողմից: Միաժամանակ հարկ է նշել, որ թագավորը պարտավոր չէ հիմնավորել ներում շնորհելու կամ մերժելու մասին որոշումը:

Ամփոփելով՝ նշենք հետևյալ առանձնահատկությունները.

- *գործընթացում ներգրավված են Դատախազությունը, Արդարադատության նախարարությունը և թագավորը.*
- *նախատեսված են որոշակի պայմաններ, որոնց առկայության դեպքում ներում չի շնորհվում:*

Հունգարիայի Հանրապետության Սահմանադրության համաձայն՝ նախագահը անհատական ներում շնորհելու իրավունք ունի:

Անհատական ներում շնորհելու իրավունքի իրացման գործընթացում արդարադատության նախարարը պատասխանատու է հետևյալի համար՝

1) նախապատրաստել գործը ներման վարչության հետ միասին.
2) հաստատել և ստորագրել նախագահի հրամանագիրը:

Հունգարիայում առկա է ներում շնորհելու ընթացակարգի նախաձեռնման երկու եղանակ. ներումը կարող է հայցվել անձի կողմից, և կարող է նախաձեռնվել

պաշտոնատար անձանց կողմից: Ներման խնդրագրի դեպքում դատապարտյալը, դատապարտյալի փաստաբանը, անչափահաս դատապարտյալի օրինական ներկայացուցիչը կամ մեղադրյալի կամ դատապարտյալի հարազատները կարող են դիմել ներման համար:

Ներման խնդրագիրը ներկայացվում է առաջին ատյանի դատարան: Այնուհետև՝ դատարանը հավաքում է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, օրինակ՝ քրեակատարողական համապատասխան հիմնարկի, պրոբացիայի ծառայողի կարծիքները, ոստիկանության հաշվետվությունը և այլն: Դատարանը ստացված բոլոր փաստաթղթերը 30 օրվա ընթացքում ուղարկում է արդարադատության նախարարին: Արդարադատության նախարարը ստացված փաստաթղթերը, ինչպես նաև ներման խնդրագրի վերաբերյալ դրական կամ բացասական եզրակացությունը ներկայացնում է Հանրապետության նախագահին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշման հիման վրա (տե՛ս օրինակ Magyar v. Hungary, գանգատ թիվ 73593/10) Հունգարիայի Հանրապետությունում ներում շնորհելու ինստիտուտը կրեց որոշակի փոփոխություններ: Մասնավորապես՝ ներդրվեց ներում հայցելու պարտադիր ընթացակարգ, ինչպես նաև հիմնադրվեց Ներման հարցերով հանձնաժողովը: *Ըստ այդմ՝ ներում շնորհելու գործընթացն ստացավ հետևյալ պատկերը.*

1) դատապարտյալը, ով կրել է իր նկատմամբ նշանակված պատժի 40 տարին, հայտարարում է, որ ցանկություն է ունի դիմել պարտադիր ներման ընթացակարգի համար.

2) արդարադատության նախարարը պետք է 60 օրվա ընթացքում իրականացնի ողջ գործընթացը.

3) արդարադատության նախարարը տեղեկացնում է Կուրիայի առաջնորդին, ով էլ ձևավորում է 5 անդամից բաղկացած Ներման հարցերով հանձնաժողովը.

4) Ներման հարցերով հանձնաժողովը բանավոր ընթացակարգով հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ 90 օրվա ընթացքում ներկայացնում է կարծիք.

5) Կարծիքը պետք է 15 օրվա ընթացքում ուղարկվի Հանրապետության նախագահին.

6) Կարծիքը ստանալուց հետո Հանրապետության նախագահը որոշում է շնորհել ներում, թե ոչ.

7) Եթե ներում չի շնորհվում, նույն գործընթացը կրկնվում է 2 տարի հետո:

Բուլղարիայի Հանրապետությունում ներում շնորհելու իրավասությունը նույնպես պատկանում է նախագահին: Ներման իրավունքի իրացման գործընթացն արդյունավետ դարձնելու նպատակով ստեղծվել է ներման հանձնաժողով, որը գործում է Բուլղարիայի սահմանադրությամբ օժտված լիազորությունների հիման վրա: Այն ունի խորհրդատվական գործառույթ նախագահի ներման քաղաքականության ոլորտում: Ներման հանձնաժողովը բաղկացած է քրեական իրավունքի, հոգեբանության, քրեագիտության ոլորտի մասնագետներից, որոնցից յուրաքանչյուրին նշանակում է Բուլղարիայի նախագահը: Ներման հանձնաժողովը ուսումնասիրում է ներում շնորհելու յուրաքանչյուր դիմում և պատրաստում պատճառաբանված կարծիք առաջարկությունների հետ միասին: Հանձնաժողովի նիստը հրավիրվում է յուրաքանչյուր ամսվա մեջ երկու անգամ և նիստերին մասնակցություն ունենալու նպատակով կարող են հրավիրվել հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, այլ մասնագետներ՝ առանց ձայնի իրավունքի: Այդուհանդերձ, նախագահը պարտավոր չէ ընդունել Հանձնաժողովի առաջարկները, ինչպես նաև ներկայացնել մերժման հիմքերը:

<u>Առաջարկվող կարգավորման բնույթը</u>

Նախագծով առաջարկվում է կարգավորել ներման, ներման խնդրագրերի ներկայացման և քննարկման, ինչպես նաև ներման հրամանագրերի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման հետ կապված հարաբերությունները:

Նախագծում առաջարկվում են հետևյալ առանցքային կարգավորումները.

1) հստակեցվել են ներման դրսևորումները՝ սահմանելով, որ ներման շնորհման դեպքում հանցագործության համար դատապարտված անձը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով կամ պատժաչափով.

2) նախատեսվել է այլ անձանց կողմից ներման միջնորդություններ ներկայացնելու հնարավորությունը.

3) ամրագրվել է ներման խնդրագրերի բովանդակությանը ներկայացվող պահանջները.

4) նախատեսվել են այն հանգամանքները, որոնք պետք է հաշվի առնվեն ներման խնդրագրերը քննարկելիս.

5) նախատեսվել է ներման խնդրագրերի քննարկման հստակ և արդյունավետ մեխանիզմ, մասնավորապես՝ որպես ՀՀ նախագահին առաջարկություն ներկայացնող անձ առանձնացվել է ՀՀ վարչապետը.

6) կարգավորվել են ներման խնդրագրերը մերժելու դեպքում ներման նոր խնդրագրեր ներկայացնելու հետ կապված հարաբերությունները:

<u>Ակնկալվող արդյունքը</u>

Նախագծի ընդունման արդյունքում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 70-րդ, 135-րդ և 139-րդ հոդվածներին համահունչ հստակ կկանոնակարգվեն ներման իրավունքի մանրամասները, ներման խնդրագրերի ներկայացման, քննարկման, ներում շնորհելու ընթացակարգերը: